# Հետազոտական աշխատանք

| | |
|---|---|
| **Կազմակերպության տվյալներ**<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ.հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com<br>+37493581908 |
| | |
| **Հետազոտության թեմա/վերնագիր**<br>• Հետազոտության թեմա | Կոմիտասի երգերի դերը որպես հայեցի դաստիարակության միջոց չորրորդ դասարանում |
| | |
| **Ուսուցչի տվյալներ**<br>• Անուն, ազգանուն, հայրանուն<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Հարությունյան Ալլա Սանասարի<br>Երաժշտության ուսուցչուհի<br>098 90 36 15<br>allaharutyunyan11@gmail.com<br>Երաժշտություն<br>1-7 դասարաններ |

| **Ուսումնական հաստատության տվյալներ**<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | Ռուբեն Սևակի անվան համար 151 հիմնական դպրոց<br>Ք. Երևան, Բաբայան 40<br>010 25 57 88<br>rubensevak151sc@mail.ru<br>Ք. Երևանի թիվ 151 հիմնական դպրոցն ունի 360 աշակերտ, 22 դասարան: |
|---|---|

# Բովանդակություն

**Ներածություն** ..... **3**
**Հիմնական բովանդակությունն Կոմիտասը և նրա մանկական երգերի ուսուցման նշանակությունը կրտսեր դպրոցում** ..... **5**
**Հետազոտության ընթացքը Կոմիտասի մանկական երգերի ուսուցումը «Երաժշտություն» ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում** ..... **18**
**Եզրակացություն** ..... **25**
**Օգտագործված գրականություն** ..... **26**

# Ներածություն

| | |
|---|---|
| **Նպատակը և հետազոտական հարցը** | **Հետազոտության նպատակն է** ուսումնասիրել Կոմիտասի երգերի դերը որպես հայեցի դաստիարա-կության միջոց չորրորդ դասարանում:<br>**Հետազոտական հարց** - Արդյո՞ք Կոմիտասի երգերը ձևավորում են հայեցի դաստիարակություն չորրորդ դասարանում: |
| | |
| **Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը** | **Մշակութային կարողունակություն** – Սովորող-ները ճանաչում են հայ մշակույթի բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողութ-յունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություն ազգային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթաց-քում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացում-ները՝ արժևորելով հոգևոր ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ ազգային երաժշտական արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ [1]: |
| | |
| **Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/** | Չորրորդ «ա» դասարան, 21 աշակերտ (10 աղջիկ, 11 տղա) |

| | |
|---|---|
| **Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)** | Կատարվել է տեսամեթոդական գրականության վերլուծություն, զրույց, դիտարկում: |
| | |
| **Հետազոտության իրականացման ժամանակահատվածը** | 2023 թվականի սեպտեմբեր |
| | |

# Հիմնական բովանդակություն

| | |
|---|---|
| **Գրականության ակնարկ**<br>• Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,<br>• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:<br><br>**<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>** | Հայ երաժշտությունը ոչ միայն մեղկ ու տխուր չէ, այլ համակ ուժ է և կենդանություն, ու իր մեջ կը սնուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց մեջ՝ կենդանի, որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ, որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը:<br>**Կոմիտաս**<br><br>Հայկական ազգային երաժտությունը դժվար է պատկերացնել առանց Կոմիտասի: Նրա գիտական և ստեղծագործական գործունեութ-յունը նոր էջ բացեց հայ երաժշտական մշա-կույթի պատմության մեջ: Հայ երգին, հոգևոր և ժողովրդական երաժշտությանը վերաբերող գիտական ուսումնասիրությունները Կոմիտա-սը ներկայացրել է Եվրոպայի մի շարք քաղաք-ներում (Բեռլին, Փարիզ, Ժնև, Լոզան և այլն), այդ թվում՝ Միջազգային երաժշտական ընկե-ության համաժողովներին, որի հիմնադիր անդամներից էր [3, էջ 539]:<br>Կոմիտաս-գիտնականը նպատակ ուներ աշխարհին ներկայացնել հայկական երաժըշ-տական հարուստ մշակույթի ավանդույթները և ապացուցել, որ «հայն |

ունի ինքնուրույն երաժշտություն»: Անգնահատելի է Կոմիտասի ավանդը բանահավաքչության գործում: Շրջե-լով հայաբնակ բազմաթիվ բնակավայրերով՝ հմուտ երաժիշտը ձայնագրել է հայ ժողովը-դական երգարվեստի տարբեր ժանրերի պատ-կանող մի քանի հազար երգ՝ այսպիսով մոռացումից փրկելով հայ ժողովրդի ստեղծած մի ողջ մշակույթ: Այդ երգերն իր գիտական և ստեղծագործական երկերի ատաղձն են կազ-մում: Որպես երգահան, երգիչ և խմբավար՝ Կոմիտասը բազմաթիվ համերգներ է ունեցել Հայաստանում, Եվրոպական երկրներում, Եգիպտոսում, Կոստանդնուպոլսում, Թիֆլի-սում և այլուր. նրա կատարումները մշտապես հիացական արձագանք են ունեցել ունկնդիր-ների շրջանում [4, էջ 92]: Կոմիտասը դասա-վանդել է Գևորգյան ճեմարանում, ապա նաև մասնավոր դասեր վարել Կոստանդնուպոլ-սում: Նա կրթել է շնորհալի երիտասարդների մի ողջ սերունդ: Կոմիտասի աշակերտներից ոմանք հայ երաժշտության բնագավառում կարևոր դեր խաղացին: Կոմիտասի կատարած գործը շարունակում է մնալ արդիական և մենք այսօր էլ շարունակում ենք աշխարհին ապա-ցուցել, որ հայկական մշակույթը դարերով մեր ժողովրդին ուղեկցած արժեք է, որը պետք փոխանցել սերնդե-սերունդ և

պահպանել օտար ազդեցություններից, ինչով էլ պայմա-նավորված է «Կոմիտասի մանկական երգերի ուսուցումը չորրորդ դասարանում» մեր կողմից ընտրված հետազոտության թեմայի արդիա-կանությունը:

Կոմիտասը համարվում է ժամանակակից հայկական դասական երաժշտության հիմնա-դիրը: Հայտնի է որպես երաժշտական ազգա-գրության ռահվիրաներից մեկը: Սողոմոն Սողոմոնյանը ծնվել է 1869 թվականի սեպ-տեմբերի 26-ին (նոր օրացույցով՝ հոկտեմբերի 8-ին) Փոքր Ասիայի Քյոթահիա քաղաքում [7]: Մկրտվել է ծնունդից երեք օր անց Սուրբ Թեոդորոս եկեղեցում և ստացել Սողոմոն անունը: Հայրը՝ Գևորգ Սողոմոնյանը, մասնա-գիտությամբ կոշկակար էր, որի ընտանիքը գաղթել էր Նախիջևանի Գողթն գավառի Ցղնա գյուղից, իսկ մայրը՝ Թագուհի Հովհաննիս-յանը, արմատներով Բուրսայից էր, և երբ իր տղան ծնվեց, նա ընդամենը 16 տարեկան էր: Սողոմոնը նրանց միակ զավակն էր: Երկուսն էլ մեծ սեր ունեին երաժշտության նկատմամբ: Տանը խոսում էին միայն թուրքերեն: Երբ Կոմիտասն ընդամենը վեց ամսական էր, նրա մայրը մահացավ, իսկ տասը տարեկանում տղան կորցրեց նաև հորը: Դրանից հետո նրան սկսում է դաստիարակել հորական տատը՝ Մարիամը, որը նրա համար եղել է երկրորդ

մայր: Մոր մահը խորը վերք էր թողել Սողո-մոնի հոգում, և նրա առաջին ստեղծագործու-թյունները նվիրված էին հենց նրան:

1875 թվականին փոքրիկ Սողոմոնն ընդուն-վեց իրենց քաղաքի միջնակարգ ուսումնա-րան, որն ավարտեց 1880 թվականին և հոր նախաձեռնությամբ մեկնեց Բուրսա քաղաք՝ ուսումը շարունակելու: Նա վերադարձավ հայրենի քաղաք հոր մահվանից չորս ամիս անց: Կոմիտասի մանկության ընկերը նրան բնութագրում էր որպես «գրեթե անօթևան»: Նա լիովին զրկվեց ծնողական խնամքից՝ դառնալով հոգեպես խոցելի, ինչը ևս դարձավ տարիներ հետո նրա մոտ ի հայտ եկած հիվանդության պատճառ: Սողոմոնի կյանքում շրջադարձային էր 1881 թվականը: Սեպտեմ-բերին 12-ամյա Սողոմոնը Քյոթահիայի հոգե-վոր առաջնորդ Գևորգ վարդապետ Դերձակյա-նի հետ մեկնում է Էջմիածին: Գևորգ Դ Կաթո-ղիկոսը հրահանգել էր, որ Գևորգ վարդապետը իր հետ Քյոթահիայից մի որբ աշակերտ բերի: Քսան երեխաների միջև վիճակահանության արդյունքում բախտը ժպտաց Սողոմոնին: Հոկտեմբերի 1-ին Սողոմոնը ներկայացավ կաթողիկոսին: Վերջինս սկսեց խոսել հայերեն և տղան ոչինչ չհասկացավ: Երբ կաթողիկոսն ասաց, որ տղան այդտեղ

անելիք չունի, քանի որ չգիտի հայերեն, Սողոմոնը պատասխանեց, որ եկել է սովորելու ու երգեց: «Լույս Զվարթ» երգելիս Սողոմոնը նկատեց, թե ինչպես կաթողիկոսի աչքերից արցունքներ գլորվեցին և թավալվելով ճերմակ մորուսի վրայով՝ կորան վերարկուի ծալքերի մեջ: Պատմական այս հուզիչ դրվագը գեղարվեստական իր ներկայացումն է ստացել Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմում: Հետո արդեն տղան Գևորգյան ճեմարանի ուսանող էր, որտեղ նա վերջապես հոգևոր խաղաղու-թյուն գտավ [6, էջ 139]:

1881-1910 թվականներին Սողոմոնը մեծ մասամբ եղել է Էջմիածնում, չնայած երկար ժամանակ է անցկացրել Եվրոպայում: Ճեմա-րանում ուսուցման առաջին տարում նա սովորեց հայկական ձայնանիշերը՝ խազեր, որոնք զարգացվել էին XIX դարում Համբար-ձում Լիմոնջյանի և նրա ուսանողների կողմից: Սողոմոնը բացահայտեց երաժշտության հան-դեպ իր մեծ սերը և սկսեց ձայնագրել Էջմի-ածնի շրջակայքի գյուղերում երգվող երգերը: Գյուղացիները նրան «Նոտայի Վարդապետ» անունն էին տվել: Կոմիտասը ամառն անց էր կացնում Հայաստանի տարբեր գյուղերում՝ առանձնահատուկ հարաբերություններ հաս-տատելով գեղջուկների հետ [7]:

Այդ ամենի արդյունքում Կոմիտասը լուծեց հայկական գեղջկական երգերի վերարտադրո-ման և պահպանման բարդ գիտական խնդի-րը: 1903 թվականի վերջին երեք տարվա հավաքագրումներից հետո լույս տեսավ «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգերի հավաքածուն:

Կոմիտասի համերգային շրջագայությունևնե-րը նպատակ ունեին հասարակությանը ծանո-թացնել հայ ժողովրդական երաժշտությանը և այդ ասպարեզում կատարած ռաումնասիրու-թյուններին: Իր դասախոսությունները Կոմի-տասը ուղեկցում էր ժողովրդական երգերի ոգեշունչ մեկնաբանմամբ: Ներքին մեծ հուզ-մունքով կատարում էր քնարական, ծիսական, աշխատանքային և այլ երգեր, ղեկավարում էր իր կազմակերպած երգչախմբերը, որոնց մաս-նակից էր դառնում տեղի հայ երիտասարդութ-յունը: Կոմիտաս Վարդապետը ժամանակի հետ քայլող անձնավորություն էր. նա ուներ կնիքներ, այցեքարտ, անվանական ծրար, կրում էր մողեսի տեսքով կրծքազարդ և իր սիրելի սաներին ու մտերիմներին անվանում էր «քէրթէնքէլէ»՝ մողես [6, էջ 169]:

1915 թվականի ապրիլի 24-ին երիտթուրքա-կան վարչակարգը շուրջ 600 հայ մտավորա-կանների հետ ձերբակալեց

նաև Կոմիտաս Վարդապետին և աքսորեց Չանղր (Կոստանդ-նուպոլսից 800 կմ հեռու): Երկու շաբաթ անց եվրոպական և ամերիկյան դեսպանների միջնորդությամբ նա ազատ արձակվեց և վերադարձավ Կոստանդնուպոլիս: Աքսորից վերադառնալուց հետո Կոմիտաս Վարդապե-տի առողջական վիճակը կտրուկ վատացավ: Նա ստացավ հոգեկան խանգարում և նրա մոտ ձևավորվեց հետվնասվածքային սթրես: Կոստանդնուպոլսի ատելության մթնոլորտը և հայերի զանգվածային կոտորածների մասին լուրերը շարունակում են խաթարել նրա զգայուն հոգեկան վիճակը: Մինչև 1919 թվականը նրան նախ տեղավորում են թուրքական ռազմական հոսպիտալում և ապա՝ տեղափոխում Փարիզի հոգեբուժա-րան, որտեղ էլ տառապանքների մեջ անց է կացնում իր կյանքի վերջին տարիները: Կոմիտասին ընկալում են որպես ցեղասպա-նության զոհ, արվեստում պատկերում որպես ցեղասպանության հիմնական խորհրդանիշ-ներից մեկը: Եղեռնի քստմնելի դրվագները, իր աշխատանքների կորուստը ծանր ազդեցին Վարդապետի նուրբ և զգայուն ներաշխարհի վրա, և նա կորցրեց հոգեկան անդորրը՝ ծանր և խորը վերապրելով իրականության և իր ժողովրդի կործանման ողբերգությունը: Նրա թողած

վերջին գրության մեջ, երբ բորբոքված ուղեղում դեռ չէին մարել գիտակցության վերջին կայծերը, հնչում է անելանելիությունն ու խոր հուսահատությունը:

Վարդապետի մոտ ակնհայտորեն խորա-նում էին հետապնդման մանիայի ախտանը-շանները, և ըստ հուշագիրների՝ յուրաքան-չյուր ցնցում և ձայն սարսափեցնում էր նրան: Վարդապետին թվում էր, թե թուրքերն անընդհատ հետապնդում են իրեն, ուստի և նա ձգտում էր բացարձակ միայնության և լռության, հաճախ չէր ընդունում իր վաղեմի բարեկամներին և ծանոթներին, իրեն տեսնել ցանկացող երկրպագուներին: Բժշկապետ Վահրամ Թորգոմյանը 1916 թվականի աշնանը, խորհրդակցելով Կոստանդնուպոլսի հայտնի հոգեբույժ դոկտոր Գոնոսի հետ, Վարդապետին տեղափոխեց Ստամբուլի Շիշլի թաղամասի *Hospital de la Paix* հիվանդանոցը, ուր Վարդապետը մնաց մինչև 1919 թվականը: Պայծառատեսության պահերին նա բազմիցս բողոքել է հիվանդանոցի անտանելի պայման-ներից. «Սնունդը՝ շան լափ, կեղտ ու ոջիլ, միակ բուժումը՝ մեկուսացում և անտարբեր վերաբերմունք»: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հայ գաղութը Վարդապետի վիճակը

բարելավելու նպատա-կով որոշեց նրան ուղարկել Ֆրանսիա: 1919 թվականի ապրիլին Կոմիտասին տեղափոխե-ցին Փարիզի Վիլ-Եվրայի հոգեբուժարան, իսկ 1922 թվականի օգոստոսին միջոցների սղութ-յան պատճառով՝ Վիլ-Ժուիֆի հոգեբուժարան, ուր Վարդապետը մնաց մինչև իր կյանքի վերջը [6, էջ 139]:

Իրականում Կոմիտաս Վարդապետի հիվան-դության վերաբերյալ կան բազմաթիվ վար-կածներ: Մինչ օրս նրա հիվանդությունն ու մահվան ստույգ պատճառը մնում է անհայտ: Վերջինս անսպառ նյութ է հանդիսանում գիտական և պատմական ուսումնասիրութ-յունների, քննարկումների համար: Կոմիտաս Վարդապետը վախճանվեց 1935 թվականի հոկտեմբերի 21-ին առավոտյան ժամը 6-ին Վիլ-Ժուիֆի հիվանդանոցում՝ գարշապարի թարախակալումից առաջացած բարդություն-ների հետևանքով: Մահից հետո ստեղծվեց Կոմիտաս Վարդապետի մահադիմակը: 1936 թվականին նրա աճյունը փոխադրվեց Երևան և թաղվեց Կոմիտասի անվան պանթեոնում: Կոմիտասի կյանքի ողջ ընթացքը ներծծված է հայ ժողովրդի գլխին թափված տարբեր աղետներով:

Կոմիտասի ստեղծագործական ոճը յուրա-հատուկ է իր տեսակի մեջ: Հիմնվելով հայ ավանդական երաժշտական մշակույթի

առանձնահատկությունների վրա՝ նա հայտ-նաբերեց հարմոնիայի և պոլիֆոնիայի կիրառ-ման նոր և հարուստ հնարավորություններ, որոնք պատշաճ էին հայ երաժշտական մտա-ծողությանը: Նրա երաժշտական ժառանգու-թյունն ընդգրկում է վոկալ («Անտունի», «Կռունկ», «Ծիրանի ծառ», «Ալ այլուղս», «Զինչ ու զինչ» և այլն), խմբերգային՝ ժողո-վրդական և հոգևոր («Անձրևն եկավ», «Լուսնակն անուշ», «Գութաներգ», «Հայր մեր», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական», «Էջ Միածինն ի Հօրէ», «Տէր, ողորմեա» և այն), և դաշնամուրային («Յոթ պար», «Մշո շորոր» և այլն) ժանրի ստեղ-ծագործություններ: Կոմիտասի ստեղծագոր-ծության մեջ առանձնակի կարևորություն է ներկայացնում իր միակ ավարտուն մեծա-կտավ գործը՝ «Պատարագ»-ը արական կազմի համար [7]: Կոմիտասն ունեցել է նաև օպերա ստեղծելու մի քանի մտահղացումներ, որոնք մնացել են անկատար:

Կոմիտասը հավաքել և գրառել է ավելի քան 3000 հայկական ժողովրդական երաժշտու-թյան նմուշներ, որոնցից ավելի քան կեսը հետագայում կորել է և միայն մոտ 1200-ն է պահպանվել: Բացի հայ ժողովրդական երգե-րից, նա նաև հետաքրքրվել է այլ մշակույթ-ներով և 1904 թվականին հրատարակել քրդա-կան

ժողովրդական երգերի երբևէ գոյություն ունեցող առաջին ժողովածուն: Նրա երգչա-խումբը շատ եվրոպական երկրներում ներ-կայացրել է հայկական երաժշտությունը: Կոմիտասը 1910 թվականին հաստատվում է Կոստանդնուպոլսում՝ խուսափելով Էջմիած-նի ծայրահեղ պահպանողական հոգևորա-կանների վատ վերաբերմունքից և հայկական երաժշտությունը ներկայացնում ավելի լայն լսարանի: Կոմիտասին ջերմորեն ընդունել են հայկական համայնքներում, իսկ Արշակ Չոպանյանը նրան անվանել է «հայկական երաժշտության փրկիչ»:

Անգնահատելի է Կոմիտասի հավաքչական ու գիտական աշխատանքը: Նա ժողովրդա-կան երգերը գրառել է ազգագրագետի վար-պետությամբ, գեղագետի պահանջկոտութ-յամբ և գիտնականի վերլուծական դիտողա-կանությամբ: Երաժշտական բանահյուսութ-յան մի շարք հնագույն և բարձրարվեստ նմուշների հայտնաբերումը (հեթանոս հավա-տալիքներին առնչվող հորովելների եղանակ-ները, «Սասունցի Դավիթ», «Մոկաց Միրզա» վիպական ասերգերը, անտունիներն ու հոգևոր տաղերը) համարվում է պատմամշա-կութային խոշոր հայտնագործություն, իսկ հավաքած ավելի քան 4000 գեղջկական երգերը՝ հայ

ժողովրդական երգարվեստի անթոլոգիա: Կոմիտասը տեսական աշխատու-թյուններում բացահայտել է ժողովրդական երաժշտության կենսական հիմքերը, բնութա-գրել հայ երգի գեղագիտական արժանիքները, վերլուծել տեսակներն ու կառուցվածքային հատկանիշները: Հավաքագրելով և պահպա-նելով հայկական ժողովրդական երգերը՝ Կոմիտասը պահպանեց Արևմտյան Հայաս-տանի մշակութային ժառանգությունը, որը հակառակ դեպքում կկորսվեր ցեղասպանու-թյան արդյունքում: Մեծ հանճարի գրիչը չի սահմանափակվել երաժշտությամբ: Կոմիտա-սը նաև տասնյակ բանաստեղծությունների հեղինակ է: Սակայն դրանք վարդապետի կենդանության օրոք չեն տպագրվել: Կոմի-տասն իրեն չէր համարում կոչումնավոր բանաստեղծ, նա գրում էր ինքն իր համար:

Կոմիտասի երաժշտությունը և դրա դասա-վանդումը հանրակրթական կրտսեր դպրոցում հայեցի դաստիարակության բացառիկ միջոց է: Կոմիտաս իմանալը շատ կարևոր է մեր մատաղ սերնդի համար, ով պետք է ապրի վառ գույներով, աշխույժ ու լուսավոր ապագայով: Չափահաս տարիքում կոմիտասյան մեղե-դին դառնում է հասկացողություն, կենսա-կերպ, արժեք: Մեզ համար մեծ խնդիր է տարածել հայ մաքուր

| | |
|---|---|
| | երգը՝ Կոմիտասի երգը՝ որը պետք է լինի հոգևոր կրթության հիմնա-քար: Կրտսեր դպրոցում Կոմիտաս ուսումնա-սիրում ենք առաջին դասարանից: Ամբողջ տարվա ընթացքում առաջին դասարանում, սովորողները Կոմիտաս լսում և երգում են գրեթե բոլոր տոների ժամանակ: Կոմիտասի՝ ծիսական երգերի և խաղերգերի միջոցով, զարգանում է կրտսեր դպրոցականի երաժըշ-տական ճաշակը: Արդեն երկրորդ դասարա-նում կարող ենք սովորել Կոմիտասի այն բանաստեղծությունները, որոնք ուսումնա-կան ծրագրով նախատեսված են տվյալ տարիքի սովորողների համար: Երկրորդ դասարանում մենք ավելի լավ ենք սկսում ճանաչել Կոմիտասին, կարդում և լսում ենք նրա ստեղծագործությունները, նկարում և երգում դրանք: Երկրորդ դասարանի սովորողին բարդ է Կոմիտասի կենսագրական տեղեկություններ հաղորդելը, հետևաբար սահմանափակվում ենք որոշ ճանաչողական տվյալներով: Այն, որ Կոմի-տասը գրել է շատ մանկական, ծիսական, աշխատանքային երգեր ու բանաստեղծու-թյուններ:<br>Օգտագործելով մեր համակարգչային հըմ-տությունները՝ ինտերնետ ցանցին միացված համակարգիչը, էլեկտրոնային գրատախտա-կը օգտագործում ենք ինտերնետում փնտըր-տուքներ և Կոմիտասի |

| | |
|---|---|
| | մասին տեղեկություն-ներ, նրա կատարմամբ ձայնագրություններ գտնելու համար: Կարողանում ենք ուսում-նասիրել և սովորել մեր ծրագրային նյութերը, ունկնդրել Կոմիտասի կատարմամբ որևէ երգ: Երբեմն աշխատում ենք նաև դպրոցի բակում, խոտերի, քարերի վրա նստած, նկարում՝ Կոմիտասի որևէ երգի ներքո: Երեխաները նկարում են այն, ինչ կստացվի այդ երգը լսելիս: Սա օգնում է կապել կրտսեր դպրոցականներին Կոմիտասի հետ, մշակել մաքուր ազգային երաժշտական լսողություն:<br>Կոմիտասը համոզված էր, որ հայ հոգևոր և ժողովրդական երաժշտությունը նույն կազ-մությունն արմատն ու ունեն, և քննադատում էր նրանց, ովքեր մակերեսային և սխալ պատկերացումների հիման վրա հայ երաժըշ-տության այդ տեսակները տարբեր էին համա-րում: Հանրակրթական դպրոցի «Երաժշտութ-յուն» ուսումնական առարկայի ծրագրի և ուսուցման հիմքում ընկած են Կոմիտասի մանկավարժական մոտեցումները: Երաժըշ-տության ծրագրով իրականացվում է հոգևոր երգերի ուսուցում՝ առաջին և երկրորդ դասարաններում ունկնդրման միջոցով, երրորդ, չորրորդ դասարաններից սկսած՝ պարզագույն շարականների ուսուցումով, բարձր դասարաններում հանդիպում են միջին բարդության շարականներ: Մեկ տարվա |

| | |
|---|---|
| | ընթացքում սովորողները անցնում են 3-4 շարական, որը իրականում շատ քիչ է հոգևոր մշակույթի բավարար յուրացման համար: Սովորողը ունկնդրում է և ծանոթանում ազգային երաժտական ստեղծագործության կոմիտասյան մշակման նմուշների հետ: Ուսուցման ընթացքում շատ կարևոր է զգուշավոր մոտեցումը հատկապես կրտսեր դասարանների սովորողների շրջանում: Ուսուցումը պետք է բխի երեխայի շահերից, ունենա երաժշտական լսողությունը, հիշողու-թյունը զարգացնելու, մաքուր երգեցողությա-նը միտված ուսուցում և զերծ մնա կրոնական թեմաներով զրույցներից: Երգերի տեքստերի բացատրությունը պետք է լինեն զուտ տեղե-կատվական և ոչ ավելին:<br>Հատվածները ուսուցանվում են հիմնակա-նում խմբային երգեցողության ձևով: Մինչ երգի ուսուցումը երաժշտության ուսուցիչը տեքստը կարդում է սովորողների հետ, մեկնաբանում է բարդ բառերը, որից հետո նոր տեղի է ունենում երգի ուսուցումը: Երգը ուսուցանվում է կտորներով՝ ոչ միանգամից: հոգևոր երգերի հատվածների ուսուցման սկզբնական փուլը բավականին դժվար է: Սովորողները տեքստերը չեն կարողանում արտասանել, իմաստը չեն հասկանում, մեղե-դին կառուցվածքային առումով բարդ է, դժվար ընկալելի: Հոգևոր երգուսուցման միջոցով զարգանում է |

| | |
|---|---|
| | երեխայի կենտրոնա-ցումը, երաժշտական հիշողությունը, հղկվում է երգեցողության մաքրությունը, կատարողա-կան, որակական առումով սովորողը մեկ քայլ առաջ է անցնում: |
| | |
| **Հետազոտության ընթացքը** | Երաժշտության խնդիրները քննելիս անպ-այման պետք է հիմնվել փորձի վրա: Ելակետ պետք է ունենալ ազգային դպրոցը, որովհետև չենք կարող արհամարհել այն, ինչը հարա-զատ է ժողովրդին, և հիմնական տեղ տալ կասկածելի նորամուծություններին: Նորամու-ծություն կատարվում է, երբ յուրացվում է ավանդականը: Սակայն ամենամեծ ու ամե-նացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը: Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս լավագույն արդյունքնե-րին հասել է բնության թելադրած պարզագ-ույն միջոցներով: Կոմիտասի երաժշտությունը և հանրակրթական կրտսեր դպրոցում Կոմի-տասի մանկական երգերի դասավանդումը հայեցի դաստիարակության |

| | |
|---|---|
| | հաստատուն ճա-նապարհ է:<br>Կրտսեր դպրոցում «Երաժշտություն» ուսում-նական առարկայի գործունեության ձևերն են երգեցողությունը, ունկնդրումը, ծեսերի, ծիս-ական գործողությունների, երաժշտական տո-ների իրականացումը, երաժշտական տեսա-կան գիտելիքները, ռիթմիկ և երաժշտառիթ-միկ վարժությունները, երաժշտական և այլ խաղերը, խաղերգերը, նվագակցությունը «բնական», հարվածային և շրխկան նվագա-րաններով, հնչյունային (բառային) ռիթմի-կան և այլն: Խաղերգերը, բնականաբար, ազգային մշակույթի լավագույն նմուշներից են, որոնք կարելի է կատարել՝ հենվելով ինչպես տեքստի, այնպես էլ մանկան ընկա-լունակությամբ ու զգացողությամբ ստեղծածի վրա: Խաղերգն ուսուցանելիս կարելի է համատեղել խաղը, եթե այն հեշտ է և հնարավորություն է տալիս խաղալով կատա-րել: Պարերգերը կատարվում են համապա-տասխան պարի ուղեկցությամբ պարային պարզ շարժումներով: Աշխատանքային եր-գերն ուսուցանելիս, եթե հնարավոր է տվյալ աշխատանքը կատարել, կատարվում է, ցու-ցադրվում, տվյալ աշխատանքին համապա-տասխան կամ ամբողջական կամ մասնակի գործողություն, որն ընթանում է այդ աշխատանքին բնորոշ որոշակի ռիթմով: |

| | |
|---|---|
| | Բնության երևույթների, կենդանիների մասին երգերն ուղեկցվում են կենդանու, բնության տարերքի ձայնը, շարժումը նմանակելով, որը կարող է ուղեկցվել ձայնային նմանակու-թյամբ և ռիթմիկ նվագակցությամբ (շրխկան, հարվածային, «բնական» նվագարաններ): Կենցաղային, կատակերգեր, այլ երգեր, որոնք ևս կատարվում են՝ ելնելով երգի բովան-դակությունից, բնույթից, ռիթմիկ կառույցից: Կարող են բեմականացվել՝ զուգակցելով պարային կամ այլ շարժումներով, ուղեկցվում են ռիթմիկ նվագակցությամբ և այլն:<br>«Երաժշտություն» ուսումնական առարկայի առաջնային խնդիրն է՝ արթնացնել աշակեր-տին, գիտակցել տալու համար, որ գոյություն ունի երաժշտություն, որ ինքը հանդիպելու է երաժշտությանը: Ոչ թե բացատրության ժա-մանակ երաժշտությունը ենթարկել աշակեր-տի անփորձ և դեռ բավական բնությանը մոտ բնազդային աշխարհին, այլ նրան տեղափո-խել դեպի երաժշտության աշխարհ, վերածը-նել, և հանձնվել երաժշտությանը: Երաժշտու-թյան առարկայական ծրագրի համաձայն կրտսեր դպրոցում (1-4-րդ դասարաններ) «Երաժշտություն» ուսումնական առարկայի ուսուցման նպատակներն ուղղված են սովորողների երաժշտական կրթությանը, |

| | |
|---|---|
| | նրանց մոտ երաժշտական մշակույթի ձևա-վորմանը: Երաժշտության ուսուցման խնդիր-ներն են սովորողներին ներկայացնել բարձ-րաճաշակ երաժշտություն, որը կնպաստի նրանց գեղագիտական ճաշակի, երաժշտու-թյուն ունկնդրելու կուլտուրայի ձևավորմանը, երաժշտության, պարի միջոցով ազգային մշակույթին հաղորդակից դարձնելուն, յուրացմանը, երաժշտական մտածողության ձևավորմանը և զարգացմանը, երաժշտական լսողության, ունակությունների բացահայտ-մանը, ազգային, հոգևոր և դասական նյութի յուրացմանը, երաժշտարվեստի զարգացմանը (մանկական երգչախումբ), գեղարվեստական մտածողության ձևավորում և զարգացում, ընդհանուր զարգացման ապահովում, ստեղ-ծագործական երևակայության զարգացում: Կրտսեր դպրոցում ուսուցանում ենք Կոմի-տասի մանկական հետևյալ երգերը. «Արև, արև, եկ, եկ», «Կաքավիկ», «Քելե, քելե», «Էս առուն», «Հինգ էծ», «Ծողեր ջան», «Զար, զընգը» և այլն: Ունկնդրվող նյութերը ենթա-դրում են.<br>• երաժշտական, գեղագիտական ճաշակի ձևավորում,<br>• ազգային, հոգևոր և համաշխարհային դասական լավագույն ստեղծագործություն-ների իմացություն ունկնդրելու միջոցով: |

Ունկնդրվող նյութերն ընտրվում են հայ ազգային, հոգևոր և դասական երգերից, պարեղանակներից, հայ և այլազգի կոմպո-զիտորների լավագույն դասական ստեղծա-գործություններից: Ունկնդրումը հարկավոր է կազմակերպել այնպես, որ սովորողը կարո-ղանա ոչ միայն լսել, այլև ընկալել ստեղծա-գործությունը: Սա, ինչ խոսք, ամենալուրջ խնդիրներից մեկն է, որը դասավանդողը պետք է լուծի: Երբ մենք փորձում ենք վերլուծել ստեղծագործությունը, ծանրաբեռ-նել հիշողությունը անուններով, զրկում ենք երեխային երաժշտությունն ինքնուրույն ընկալելու հնարավորությունից, խանգարում և թույլ չենք տալիս իմանալու՝ ինչ է երաժշտությունը: Ունկնդրումը սկսվում է դեռ նախակրթարանից, որտեղ պետք է հստակ իմանալ՝ ինչ չափով և երբ մատուցել ծրագրով նախատեսված երաժշտությունը: Նախակըր-թարանում ունկնդրվող նյութեր կարող են լինել նաև կրտսեր դպրոցի ծրագրային երգերը, իսկ յուրաքանչյուր դասարանում կարող են լինել հաջորդ տարվա ուսուցման համար նախատեսված ծրագրային երգերը: Սովորողը ծանոթանում է, երաժշտական լսողությամբ ընկալում, իսկ հաջորդ տարի՝ բավական հեշտ սովորում:

Հանրակրթական դպրոցում երեխայի ներ-դաշնակ հոգևոր զարգացման կարևոր

| | |
|---|---|
| | խնդիր-ներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթներ, ծեսեր, տոներ: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդա-կան տոները կզարգանային, կփոխվեին հասարակական փոփոխությունների հետ համաքայլ: 21–րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև. մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում, հասարակութ-յան մեջ չի պահպանվել ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը: Հանրակրթական դպրոցում սովորում են տարբեր երաժշտական ունակությամբ սովո-րողներ՝ բավական թույլից մինչև շատ լավ, երբեմն՝ փայլուն: Յուրաքանչյուր երեխա երգը կատարում է իր ունակությունների չափով: Ռիթմի զգացողությունը, ի տարբերու-թյուն հնչյունի կոնկրետ բարձրությունն ընկալելու հատկությունից, կա հիմնականում բոլորի մոտ: Երաժշտության ներգործությունը երեխաների ընդհանուր գործունեության վրա ուղեկցվում է այս կամ այն շարժումով: |

| | |
|---|---|
| | Երաժշտության ուղեկցությամբ երեխաները պարում են, խաղում, արտահայտում տարբեր կերպարներ:<br>Կրտսեր դպրոցում ազգային երգերը, խաղ-երգերը, պարերգերը երաժշտական կրթութ-յան մեջ արդյունավետ նյութեր են: Կոմիտասը չէր կարող սխալվել՝ մանուկների հոգևոր դաստիարակության համար տալով ընտրյալ ազգային երաժշտություն: Անհիշելի ժամա-նակներից մայրերը, տատիկները մանուկների հետ խաղում էին մատնախաղեր, ձեռնա-խաղեր, թռցնոցիներ և այլն: Մեկուկես-երկու տարեկան մանուկները յուրացնում էին մոր և իրենց միջև դրսևորվող խաղերը և դրանք փոխանցում մանկական միջավայր: Մանկա-կան տարրական խաղերին փոխարինում են զարգացած և բազմապիսի ձևեր ունեցող պատանեկան շարժական ու գործիքավոր խաղերը: Վերջիններս ներկայացնում են շըն-չառությունն ու վերջույթները, ճարպկությունն ու ճկունությունը, շրջահայեցությունը զարգա-ցնող խաղեր: Մարմնի շարժումների և խոսքի օրգանների համադրումն օգնում է խոսքի լարվածության և միատոնության վերաց-մանը: Ռիթմիկ շարժումների կատարման ժամանակ երեխաների կողմից ձեռք բերված անկաշկանդվածությունը և անմիջականութ-յունը դրական են ազդում |

| | |
|---|---|
| | խոսքի օրգանների շարժողական հատկությունների վրա, խթա-նում արտասանական հմտությունների ձևա-վորմանն ու ամրապնդմանը, դրական ազդում ձայնի, խոսքային շնչառության, խոսքի տեմ-պի, շեշտադրության և մեղեդայնության վրա: |
| | |

# Եզրակացություններ, առաջարկություններ

| | |
|---|---|
| **Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին** | Հետազոտության արդյունքում եկանք այն եզրակացության, որ չորրորդ դասարանում Կոմիտասի մանկական երգերի ուսուցման արդյունքում սովորողները ճանաչում են հայ մշակույթի բաղադրիչները՝ որպես հայեցի դաստիարակության միջոց, մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություն ազգային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ ազգային երաժշտական արվեստը և |

| | |
|---|---|
| | ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ: |
| | |
| **Այլ տեղեկատվություն** | |

# Օգտագործված գրականության ցանկ


1. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման ու հաստատման կարգ: 4.02.2021. N 136-Ն: https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

2. «Երաժշտություն» առարկայի առարկայական չափորոշիչ https://escs.am/files /files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf – 88 էջ:

3. Հայկական սովետական հանրագիտարան / Վ.Համբարձումյան, Կ.Խուդավեր-դյան - 1974. - Հատոր 5. - էջ 539.

4. Ավագյան Հ. Կոմիտաս վարդապետի բաց ստեղծագործություն հասկացողու-թյունը, Կահիրե, 2019: - 92 էջ:

5. Փոլադյան Ս. Կոմիտաս վարդապետը և նրա ներդրումը երաժշտական էթնոգրաֆիայի մեջ:

6. Գասպարյան Գ. Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններ-ում, Երևան 2009: - 139 էջ:

7. Աթայան Ռ. Հայ քաղաքային ժողովրդական երգը Կոմիտասի ստեղծագործութ-յան մեջ: Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 11: - 1969 Արխիվացված է օրիգինալից 2017-05-21-ին:


# Հավելվածներ

| | |
|---|---|
| **Հաշվետվության կցված նյութեր**<br><br>● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)<br>● Նկարներ<br>● Արդյունքներ | |